

րուն վրայ և անոնց նշանաւոր ջոջերուն հետ խել մը առատ նախապատուութիւններ ու հեղինակութիւն մը՝ սոհմային և եկեղեցապատկան դործերու մէջ:

Եւ ասոնք թուի թէ էին Պոլիսի մեծատուններուն ծանօթ սկիզբը. և արագ արագ դբաւեցին էսնաֆ աղաներէն ու արհեստաւոր ժողովուրդէն բարձր ու մեծապատիւ դիրք մը:

Այս սկզբնական ամիրաներուն վրայ եկան հետզհետէ աւելցան, փոքր Ասիայի միւս քաղաքներէն, մինչեւ իսկ Երեւանէն, Ազուլիսէն, Ջուղայէն, Գաւրէժէն ու Սպահանէն՝ մեծ և հարուստ տուներ: Ասոնք ալ՝ վերիններուն նման՝ յարելով օսմանեան մեծ անձնաւորութեանց՝ ժամանակին անցուկ միջոցներովը՝ գլուխ կեցան պետական գործերու Ալլա, Պալի, Հօճայ, անուանով, իբր հաւատարիմներ տէրութեան, և իբրեւ դարձեալ այնպիսիներ՝ պետ կարգեցան ու կոթողեցան սոհմային ալ գործերու միւթէվէլի և հօճայ 1 կամ չէլէպի անուններով: Ամիրայութեան ծագումն՝ այսպէս կը գտնենք Պոլիսի մէջ:

Այս պոլսական մեծատունները՝ շուտ համակերպեցան պետական ու մայրաքաղաքական շիւումներով՝ տեղական տիրող տարազին թէ լեզուով, թէ բարքով, թէ հանդերձանքով. միայն՝ կրօնական աւանդութեանց պինդ փարելով կըրցան պահել հին բայց տարաւամ տիպ մը:

Ասոնցմէ պատմութիւնը կը յիշէ նախ վերն ակնարկուած գաղթականներուն վրայ՝ 1600էն 1650 երեւելի խալֆա Աստուածատուրնի Պոլիս, որ սիրելին ու եղբօրը պէս էր ժամանակին Օսմանեան Վէզիրին և անոր միջոցով մեծ գործեր կը տեսներ: Նոյն միջոցներն (1621 յունուար 17ին) է պատահած նաեւ Վոսփորոնն ի շար՝ տարեգիրքերուն մէջ չտեսնուած՝ ամենասատիկ ցուրտ և ձմեռ մը, որ սառեցուցած է Նեղուցը, և Ղալաթիայէն Սկիւտար քայլելով դացեր եկեր են Դանուբի պէս²: Հոս՝ 17րդ դարին սկիզբները՝

1. Տեսած ենք ամիրամերու տրուած պետական փառաւոր պէրաթներ՝ դիւանական լայն — տող հսկայ գրչութեամբ, մինչեւ 27 1/2 տողոց:

2. Դարապատում և Ամարանոց Բիւզանդեան (էջ 35) կը յիշեն զայս: